ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 173

08 նոյեմբերի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով ***որոշում եմ***

1. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի 2000.0 թիվը փոխարինել 1300.0 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 4 (այլ մշակութային կազմակերպություններ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 0 թիվը փոխարինել 300.0 թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 12.0 թիվը փոխարինել 412.0 թվով:
4. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին.
   Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.